Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
պատասխաններ՝ 12-րդ դասարան

1. Ողջ գիշեր կանթեղը վառ մնաց. բազմաշնորհ այրը՝ Գրիգոր Մագիստրոսը՝ մեծահռչակ հայը, մագաղաթին էր հանձնում իր մտքերը՝ **թրծելով** դրանք հոգու հնոցում: 5

«Ա՛զգ իմ, ա՛չք իմ, - այսպես սկսեց իր ուղերձը, ավելի ճիշտ՝ պատգամը, - ապրեցի ներհակության՝ խառնակ, **ամեն ինչ** ավերող դարաշրջանում, ականատեսը եղա հայոց թագավորության կործանման, ու **Անին**՝ տիեզերքի **աչքը**, օտարի նստավայր **դարձավ**: Տեսա՝ հայի՝ **Աստծուց** շնորհված ոգին արարող ինչպիսի բարձունքի հասավ՝ կերտելով փառահեղ տաճարներ, և աննման գոհարներ երկնեց: Մեր արքաները **ողջամիտ** կառավարեին՝ տերությունը չէր տապալվի: Փորձեցի **մեջքս դեմ տալ**, մնացի, սակայն, փլվածքի տակ:20

Տիրոջ **կամքով** արարեցի հեղուկ, **որ** ի զորու է առույգ **պահելու** մարդուն երկու հարյուրամյակ: Այդ մասին չեն իմանա իմ ժամանակակիցները. երկար կյանքի արժանի չեն. հղփացել են. նրանք ապրում են մեղկ, անժույժ բարքով: Համոզված եմ՝ թուրմի գաղտնիքը կծախեն օտարին, ինչպես հայրենադավը՝ շքեղաշուք Անին: Ծածկագիրը պահ տվի Տարոնի՝ լույսից զուրկ քարայրերից **մեկին** ու այն կտակում եմ հայոց ազգանվեր սերունդներին:9

Կգան ժամանակներ, և ձերբազատվելով **ամբարշտությունից**՝ կյանք պարգևող հյութը կբաշխվի մաքրագործված ժողովուրդներին, ու ամենքը կիմանան՝ հրաշագործ հեղուկի հայրենիքը **Հայաստանն** է: Այդժամ հայոց հողի վրա կհնչեն հայերեն խոսքն ու հայերեն հրովարտակը, և հայապատկան գանձերը էլ չեն կողոպտվի օտարաշուրթ **տիրակալներից**»:6

Գրիչը ցած ընկավ նրա ընդարմացող ձեռքից: Մոմի լույսը հանգավ:

Սա մեծահանճար հայի վերջին թուղթն էր:

2. **թրծելով** - ձևի պարագա, **ամեն ինչ**- ուղիղ խնդիր, **Անին**-ենթակա, աչքը-**բուն բացահայտիչ, դարձավ** - հանգույց, **Աստծուց** -ներգործող խնդիր, **ողջամիտ** - ձևի պարագա, **մեջքս դեմ տալ**- ուղիղ խնդիր, **կամքով**-հիմունքի պարագա, **որ**-ենթակա, **պահելու**- հատկացուցիչ, **մեկին**- հանգման խնդիր, **ամբարշտությունից**-անջատման խնդիր, **Հայաստանն**-ստորոգելի, **տիրակալներից**- ներգործող խնդիր

3. **սակայն**- զիջական վերաբերական / համադաս. շաղկապ
որ- հար. դերանուն / ստորադաս. շաղկապ
ինչպես հարաբերական դերանուն / հարցական դերանուն
էլ- ժամանակի մաբայ / համադաս. շաղկապ

4. **գրգամոլ**-փափուկ կյանք սիրող, փափկասուն կյանք սիրող, փափկակենցաղ
քուրձ- այծի մազից հյուսված կոպիտ կտոր,այդ կտորից կարված զգեստ
կուպր- սևագույն խիժային թանձր հեղուկ, ձյութ
զերդ- նման, ինչպես, ասես
չամչարակ- չորացրած կամ թարմ մրգերից պատրաստված քաղցր ըմպելիք,
քարվանսարա-իջևանատուն,փխբ. աղտոտ վայր, անկարգ՝ խառնաշփոթ միջավայր,
ի տրիտուր –որպես փոխհատուցում
վին- լարավոր հնագույն նվագարան
անթեղել-կրակը մոխրով՝ հողով ծածկել, փխբ. պահել, թաքցնել,
ամիճ- 1. որսի կենդանի, 2. աղանդեր. 3. համադամ կերակուր որսի մսից, 4.չրերով լցոնած տապակած թռչուն

5. իմ դուստրի կամոք-**դստեր**
երկպառակտություն-**երկպառակություն**
ի հակակշիռ Արևելքին -**Արևելքի**
նախատեսնված- **նախատեված**
խոսացած-**խոսած**
հեռատեսի ակնոցներ հագնել-**ակնոց դնել**
ի թիվ այլոց- **ի թիվս այլոց**,
մթնացնել- **մթնեցնել**,
կարդացնել -**կարդալ տալ**
դեմ դիմացով-**դեմ դիմաց**

6. **լի**՝ լիառատ, **լից**՝ լիցք, **լեց**՝լեցուն, **լց**՝ լցոն, **լիր** (**լր**)՝ սիրալիր, լուսալիր, լրիվ, համալրում
տալ՝ տալիք,**տու**՝ ձեռնտու, **տվ**՝տվյալ, **տուր** (**տր**)՝ անձնատուր, պարգևատրում
կյանք- **կյաց**-նստակյաց, **կեց**-կեցություն, **կեն**-կենաց, **կենս**- կենսունակ, **կենց**-կենցաղ,
կենդ- կենդանական, բառերի

7. **գլուխ-** գլուխ բերել, գլուխ դնել, չոր գլուխ,
գլխի ճարը տեսնել, գլխի գցել, գլխի հոգսը քաշել, գլխի տերը լինել,
գլխին տալ, գլխին ավետարան կարդալ, գլխին խփել,
գլխից դուրս, գլխից ազատել, գլխից հանել, գլխից դուրս տալ, գլծից ձեռք քաշել,
գլխով անցնել, գլխով անել, գլխով անցած, գլխով երդվել, գլխով հատուցել,
գլխում փոթորիկ, գլխում միտք ծագել,

Գնահատման չափանիշներ – 12-րդ դասարան

Հարց 1.Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
Հարց 3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:
Հարց 4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
Հարց 7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:

2-րդ առաջադրանքից սկսած՝ ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1, կետադրականի համար 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: